

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

08.12.2004թ.

ժ. 17.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ն. Բաղդասարյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում՝ մեկ հարց.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Տնտեսական և ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշներ կրթության ոլորտում» Ձև թիվ 1-ՏՖ (կրթություն) (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Տնտեսական և ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշներ կրթության ոլորտում» Ձև թիվ 1-ՏՖ (կրթություն) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

ՀՀ ՎՊԽ 26.10.04 նիստում ներկայացված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը հանրակրթական ուսումնական հաստատություններում» Հավելված 1 Ձև թիվ 1-Ֆ (հանրակրթություն) (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին» հարցի քննարկման ժամանակ ՀՀ ՎՊԽ անդամներ Վ. Դանիելյանի և Յու. Պողոսյանի կողմից ներկայացվել էին հաշվետվության ձևի և լրացման հրահանգի էական վերախմբագրմամբ և բովանդակային փոփոխության ենթարկված տարբերակ՝ նոր կառուցվածքով, լրացուցիչ ցուցանիշներով և ներկայացման ժամկետներով: Հիմք ընդունելով քննարկման արդյունքները և ներկայացված առաջարկությունների կարևորությունը, խորհուրդը առաջարկել էր ՀՀ ՎՊԽ անդամներ Վ. Դանիելյանին և Յու. Պողոսյանին կազմակերպել քննարկումներ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչների հետ «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը հանրակրթական ուսումնական հաստատություններում» Հավելված 1 Ձև թիվ 1-Ֆ (հանրակրթություն) (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի նոր տարբերակը վերջնական տեսքի բերելու, ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համաձայնեցնելու և ՀՀ ՎՊԽ ներկայացնելու համար:

Նշվեց, որ վարչական վիճակագրական հաշվետվության ձևի մշակման ու համաձայնեցման աշխատանքները ավարտվել են և ՀՀ կրթության և գիտության նախարարի 08.12.2004թ. թիվ 21-06-11/1656 գրությամբ ՀՀ ՎՊԽ քննարկման է ներկայացվել հաշվետվության ձևի նոր տարբերակը՝ հավանության արժանացնելու նկատառումով:

Որոշեցին՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Տնտեսական և ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշներ կրթության ոլորտում» Ձև թիվ 1-ՏՖ (կրթություն) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին՝ համաձայն հավելվածի:

/Արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան